

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ԾԹ-05/20.04.20-ԱՄ ծածկագրով գնման բաց մրցույթի

«ՀրազՋԷԿ» ԲԲԸ հայտարարում է բաց մրցույթ Ծծմբական թթու (տեխնիկական, ԳՈՍՏ 2184-77) - 45 տոննա՝ 100% կոնցենտրացիայի հաշվարկով, գնելու համար:

Մատակարարման ժամկետ է սահմանվում մինչև 2020թվականի սեպտեմբերի 10-ը:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք::

Հայտերը ներկայացնել հայերեն կամ ռուսերեն, մինչև 08.06.2020թ. ժամը 15<sup>00</sup>, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

Հայտերի բացումը տեղի կունենա 08.06.2020թ. ժամը 15<sup>30</sup>-ին, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում:

Մրցույթների պատվիրատուն և ֆինանսավորողը «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ն է:

Մրցույթի հաղթողի ընտրությունը կկատարվի գնային գնահատման սկզբունքով:

Մրցույթի հրավերի և լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, հեռ. (223) 6-07-12, ֆաքս (223) 2-36-12, էլ.փոստ՝ info@raztes.am :

Անհրաժեշտության դեպքում դիմել Ընկերության ԳՏՏ-գլխավոր ճարտարագետ, գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մնացականյանին, բջջ.հեռ (093) 93-22-33:

## Հ Ր Ա Վ Ե Ր

1. Սույն հրավերը տրամադրվում է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից 2020թ. ապրիլի 21-ին տեղեկագրերում հրապարակված ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՕԹ-05/20.04.20-ԱՄ ծածկագրով ծծմբական թթվի գնման բաց մրցույթի հայտարարության հիման վրա:
2. Մրցույթի ծածկագիրը՝ **ՀՋ-ԲՄԸ-ԱՊՁԲ/ՕԹ-05/20.04.20-ԱՄ**:
3. Հայտը ներկայացնել Գնումների մասին օրենքի 30 հոդվածի համաձայն:
4. Մասնակցի որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատումը կկատարվի ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման 59-րդ կետի պահանջներին համապատասխան, իսկ մասնակցի կողմից հայտարարություն չներկայացնելու դեպքում՝ Գնումների մասին օրենքի հոդված 6-ին համապատասխան:
5. Գնման առարկայի բնութագիրը՝  
**Ծծմբական թթու տեխնիկական (ԳՕՍՍ 2184-77), 45տոննա՝  
100% - կոնցենտրացիայի հաշվարկով:**
6. Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի ընտրությունը կատարվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:
7. Պայմանագրի նախագիծը տրամադրվում է մասնակցի գրավոր պահանջով:
8. Մրցույթն իրականացվում է մեկ փուլով, առանց չափաբաժինների:  
Մատակարարման ժամկետ է սահմանվում մինչև 2020թվականի սեպտեմբերի 10-ը:
9. Հայտով ներկայացվող առաջարկված գինը նշվում է ՀՀ դրամով, գրված թվերով և տառերով և ներառում է հաշվարկման կարգը:
10. Հայտով ներկայացված առաջարկված գնի հաշվարկը պետք է ներառի հայտատուի բոլոր ծախսերը, ներառյալ փոխադրումը «ՀրազՋԷԿ» -ի տարածք:
11. Հայտի և պայմանագրի ապահովումն իրականացվում է Գնումների մասին օրենքի 32 և 35 հոդվածների համաձայն:
12. Հայտը ներկայացնել Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ փաստաթղթային ձևով, մեկ բնօրինակ, հայերեն կամ ռուսերեն, **մինչև 08.06.2020թ. ժամը 15<sup>00</sup>**, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, 2302, Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Գործարանային 1 հասցեով:

13. Մրցույթին առնչվող հարցերով դիմել՝ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ, գնահատող հանձնաժողովի քարտուղարին, հեռ. (223) 6-07-12, ֆաքս (223) 2-36-12, էլ. փոստ՝ [info@raztes.am](mailto:info@raztes.am):

14. Հայտերը կբացվեն **2020թ. հունիսի 08-ին ժամը 15.30-ին** նշանակված նիստում, ըստ հայտերի գրանցամատյանի հերթականության:

15. Սույն գնման գործընթացում գնահատող հանձնաժողովը ղեկավարվում է Գնումների մասին օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման դրույթներով:

16. Պայմանագիրը կկնքվի մրցույթում ընտրված մասնակցի հետ անգործության ժամկետը լրանալուց հետո, տվյալ քիմիական նյութը ձեռքբերելու, պահելու, փոխադրելու համար թույլտվության պետական գրանցման փաստաթուղթ ներկայացնելու պայմանով:

17. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները կամ ընդունված որոշումները բողոքարկելու՝ մասնակցի իրավունքը և կարգը սահմանված է գնումների մասին օրենքի 46 և 50 հոդվածներով:

18. Գնումների մասին օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

19. Սույն գնման հայտի առնչությամբ պատվիրատուն այլ տեղեկատվություն չունի:

ԳՏՏ-Գլխավոր ճարտարագետ,  
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Ա.Մնացականյան